

Իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր հաճախորդների բանկային հաշիվներ			
1.	Բանկային հաշվի վարում		
1.1	Բանկային հաշվի բացման միջնորդավճար՝	0 ՀՀ դրամ	
1.2	Բանկային հաշվի տարեկան սպասարկման միջնորդավճար ¹ (բացառությամբ վարկային հաշիվների)	5,000 ՀՀ դրամ	
1.3	Հաճախորդի բանկային հաշվի փակման միջնորդավճար՝		
1.3.1	Հաճախորդի դիմումի համաձայն՝	0 ՀՀ դրամ	
1.3.2	Առանց հաճախորդի դիմումի ²	2,500 ՀՀ դրամ	
1.3.3	Այլ ծառայություններ հաճախորդի ցանկությամբ	պայմանագրային	
1.3.4	Ստանդարտ ձևաչափի չեկային գրքույկի տրամադրում	0 ՀՀ դրամ ³	
1.4	Բանկային հաշվի (ներառյալ ավանդային և վարկային հաշիվների) շարժի և մնացորդի վերաբերյալ SMS ծանուցում (յուրաքանչյուր հաղորդագրության համար)	30 ՀՀ դրամ ³	
2.	Բանկային հաշվի մնացորդ		
2.1.	Բանկային հաշվի նվազագույն մնացորդ	Չի պահանջվում	
2.2.	Հաշվի օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան տոկոսադրույքի չափ	ՀՀ դրամ	Արտարժույթ
		0%	0%
3.	Տեղեկատվական ծառայություններ		
3.1.	Մինչև 1 ամիս ժամանակահատվածի համար բանկային հաշվի քաղվածքի (ներառյալ ավանդային և վարկային հաշիվների) տրամադրում	0 ՀՀ դրամ ³	
3.2	Հաճախորդի պահանջով բանկային հաշվի քաղվածքի տրամադրում ըստ ժամանակահատվածի՝ (ներառյալ ավանդային և վարկային հաշիվների)		
3.2.1	2-12 ամիս ներառյալ ժամանակահատվածի համար (յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր փաստաթղթի համար)	2,000 ՀՀ դրամ ³ + փոստային ծախսեր ⁴ (առկայության դեպքում)	
3.2.2	12 ամսից ավել ժամանակահատվածի համար (յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր փաստաթղթի համար)	3,000 ՀՀ դրամ ³ + փոստային ծախսեր ⁴ (առկայության դեպքում)	
3.3.	Տեղեկանքների տրամադրում՝		
3.3.1	Ստանդարտ բնույթի տեղեկանքների տրամադրում հայերեն/անգլերեն լեզուներով ⁵	2,000 ՀՀ դրամ ³ + փոստային ծախսեր ⁴ (առկայության դեպքում)	
3.3.2	Ոչ ստանդարտ բնույթի տեղեկանքների և համանման վճարային փաստաթղթերի տրամադրում հայերեն/անգլերեն լեզուներով (համաձայն հաճախորդի գրավոր դիմումի) ⁶	5,000 ՀՀ դրամ ³ + փոստային ծախսեր ⁴ (առկայության դեպքում)	
3.4	Աուդիտորական հարցման պատասխանների պատրաստում և տրամադրում կազմակերպություններին	10,000 ՀՀ դրամ ³ + փոստային ծախսեր ⁴ (առկայության դեպքում)	

¹Մեկից ավել դրամային կամ մեկից ավել արտարժույթային հաշիվ ունենալու դեպքում սպասարկման վճարը գանձվում է միայն մեկ դրամային և միայն մեկ արտարժույթային հաշվի համար: Հաշվի սպասարկման վճարը գանձվում է միանվագ, յուրաքանչյուր 12 ամսվա համար:

²Հաճախորդի բոլոր հաշիվներով 12 ամիս անընդմեջ գործարք չիրականացնելու դեպքում հաշիվը դառնում է չաշխատող հաշիվ և Բանկը գանձում է միջնորդավճար 2,500 ՀՀ դրամի չափով և փակում է Հաճախորդի հաշիվները, եթե դրանց մնացորդները գրոյական են: Ընդ որում այն պահից, երբ հաշիվը դառնում է չաշխատող հաշիվ, ապա 1.2 կետում նշված Հաշվի սպասարկման վճարը այլևս չի գանձվում: Հաշվի սպասարկման վարձի հաշվարկը վերականգնվում է, եթե հաճախորդի հաշիվներից հանվում է մեկ տարի շարժ չունեցող արգելանքը և հաշիվը դառնում է ակտիվ հաշիվ:

^{2.1}Ընդ որում, նշված միջնորդավճարը գանձելու համար Հաճախորդի հաշիվներին բավարար միջոցներ չլինելու դեպքում, Բանկը գանձում է միջնորդավճար հաշիվներին առկա մնացորդի չափով:

^{2.2}Եթե հաշիվներին առկա մնացորդը 2,500 ՀՀ դրամից ավել է, ապա գանձվում է 2,500 ՀՀ դրամ, իսկ 13-րդ ամսից սկսած հաջորդող չաշխատող ժամանակահատվածի համար՝ ամսական 1,000 ՀՀ դրամ:

³Սակագները ներառում են ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ):

⁴Փոստային ծախսերը կիրառվում են միայն ՀՀ տարածքից դուրս առաքման դեպքում

⁵Բանկի ստանդարտ բնույթի տեղեկանքներ են համարվում բանկային հաշիվների առկայության, մնացորդի, հաշիվներ չունենալու, ավանդային հաշիվների, վարկային պարտավորությունների, պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանքներ:

⁶Բանկի ոչ ստանդարտ բնույթի տեղեկանքներ են համարվում ստանդարտ բնույթի տեղեկանքներից տարբերվող տեղեկանքները:

¹Հանձնարարականների տրման և կատարման ժամկետներ՝ համաձայն փոխանցումների սակագների ու պայմանների